



Հավատացյալները կապանքի մեջ

Կենտրոնացում

Հավատացյալները կարող են լինել սատանայի կապանքի մեջ մեղքի, հիվանդության և դիվային ազդեցության միջոցով, որ մենք բոլորս թույլ ենք տալիս մեր կյանքում:

Ուսումնասիրություն

Բանալի համարներ՝ Հովհ. 8.31-36, Ղուկ. 13.11-16, Մարկ. 7.24-30:

Մեր կյանքում, կապանքի համար երեք բաց դուռ կա.

- *Շարունակական անօրենություն* (Հռոմ. 6.16, Եր. 7.8-11)

Ինչպես այն հավատացյալները, որոնց հետ խոսեց Հիսուսը Հովհաննես 8-րդ գլխում, մենք նույնպես կարող ենք կույր լինել մեր սեփական կապանքների հանդեպ: Մեր կյանքի շարունակական մեղքերին մենք երբեմն նայում ենք որպես սկարությունների, ոչ թե կապանքների, որ մահվան է տանում: Մենք չենք կարող ազատագրվել, քանի դեռ չենք տեսել, որ կապանքի մեջ ենք:

- *Շարունակական հիվանդություն*

(Բ Օր. 28.58-61, Գործք 10.38, Գործք 19.11-12):

Ղուկաս 13-րդ գլխում, Հիսուսը բժշկեց մի կնոջ, ում հիվանդությունն առաջացել էր սկարություն ոգուց: Ոչ բոլոր հիվանդություններն են դիվային, սակայն որոշ հիվանդություններ հոգևոր արմատներ ունեն: Շարունակական հիվանդությունը կարող է նշան լինել, որ հակառակորդի համար բաց դուռ կա մեր կյանքում:

- *Շարունակական ազդեցություն* (Բ Օր. 18.9-12, Հայտ. 22.14-15):

Հիսուսը մի դև դուրս քշեց փյունիկ ասորի կնոջ աղջկանից: Այս կնոջ մշակութային ժառանգությունը ներառում է հրեական հավատալիքների և օկուլտիզմի խառնուրդ: Շատ հավատացյալներ իրենց կյանքում ունեն նմանատիպ խառնուրդ, երբ շփվում են օկուլտիզմի հետ, սակայն հպարտորեն հավատում են, որ դա իրենց վրա չի ազդի: Երբ մենք դուռ ենք բացում օկուլտիզմի համար, մենք դուռ ենք բացում հակառակորդի համար:

Քննարկում

1. Աստվածաշնչյան հետևյալ պատմություններից ո՞րն է ավելի շատ խոսում քեզ հետ՝ Աբրահամի որդիները, տկարության ոգով բռնված կինը, կամ փյունիկ ասորի կինը: Ինչո՞ւ:
2. Մի ասպարեզ, որտեղ սատանան գողություն կանի մեզանից, առողջությունն է: Դու (կամ որևէ մեկը, ում ճանաչում ես) երբևէ ունեցե՞լ ես դիվային հիվանդություն կամ վնասվածք: Ինչպե՞ս դու զանազանեցիր, որ դա դիվային էր: Ինչպե՞ս դու աղոթեցիր բժշկության համար:
3. Կարդա Հովհ. 8.34-36-ը: Որո՞նք են այն մեղքերը, որ մենք, հնարավոր է, գայթակղություն ունենանք կապանքի փոխարեն անվանել տկարություններ: Ինչպե՞ս է մեր ինքնությունը, որպես Աստծո որդիներ, մեզ օգնում ազատ ապրել մեղքից:
4. Օկուլտիզմն այսօր գրկաբաց ընդունվում է մեր մշակույթի մեջ: Երբեմն դժվար է զանազանել, թե որն է օկուլտական, քանի որ այն փաթեթավորված է հումորի կամ մասսայական զվարճանքների մեջ: Ինչպե՞ս դու կօգնեիր նորադարձ հավատացյալին՝ զանազանելու և խուսափելու օկուլտիզմի վնասակար ազդեցությունից:
5. Մարկ. 7.27-ում Հիսուսն ազատագրման մասին խոսում է որպես «երեխաների հացի»: Մտածիր այդ փոխաբերության մասին: Ո՞վ է տալիս հացը: Ովքե՞ր են երեխաները: Որքա՞ն հաճախ են նրանք ուտում: Ինչպե՞ս են երեխաները հաց ձեռք բերում: Որքա՞ն հաց կա:

Տուն տար

Ամփոփելիս, հիշիր հետևյալը.

- Հիսուսը քեզ կարող է ազատել մեղքի բոլոր տեսակի կապանքներից:
- Եթե դու հաճախ ես հիվանդանում, կարող ես հարցնել, թե կա՞ արդյոք քո կյանքում բաց դուռ սատանայի համար:
- Ազատության առաջին քայլը խոնարհվելն է և Աստծուց օգնություն խնդրելը:

Աղոթիր

Աղոթիր խմբի յուրաքանչյուր անդամի համար, որպեսզի ազատություն ստանան իրենց կյանքի այն ասպարեզում, որտեղ կարիք ունեն: